Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17238

1904

369
S-26

369 / 5-26

297

ՏԱՐԵՒՈՐ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿԱՆ ԱՏԵՆԻՆ ՅԱՆՁԱՆՁՆԱՑ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ

# ԲԱՏԱՒԻՈՅ

ՎԱՍՆ 1903 ԱՄԻ

7 XI 1922

2001

370 / 2395-Յէ

2010

ՆՈՐ — ՋՈՒՂԱ
Տպարան Ս. Ամենափրկիչ Վանուց
1904

369
S-26
8883
370
Չ395-ՏԿ

# ՏԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հանրական Ատենին Ցանձանձանաց Հայ ժողովրդոց ի Զաւա, վասն 1903 ամի, ընթերցեալ առաջի ժողովոյ Հայ Հասարակութեան, գումարեալ ի սրահի շինուածոյ Ս. Յովհաննու Եկեղեցւոյ ի Բրաւիա, յ'8-երորդում Մայիս ամսոյ 1904 ամի:

---

*Մեծարգոյ Պարոնայք Ժողովոյս՝*

*Ըստ 18-երորդ պայմանի Սահմանադրութեան մեր ահա Ատեան մեր խնդրէ յայտնել Արգոյ Ժողովրդ զանցս տարւոյն անցելոյ, և տալ համար զՅանձանձանաց Ազգային ի պաշտօնավարութեան իւրոյ։*

*Ի վերայ գրասեղանի առաջի Ժողովրդ դասեալ գտանին վասն տեսութեան և քննութեան Ձեր բոլոր մատեանք և հաշիւք, մուրհակք կալուածոց, դիրք պարտուց, թուղթք յարգուն և կչիռք գանձուն երկքին Հաստատութեանց մեր։*

---

## ՀԱՆՐԱԿԱՆ ԱՏԵԱՆ ՅԱՆՁԱՆՁԱՆԱՑ.

*Անդամք Ատենին մնացին անփոփոխ ի պաշտօնի իւրեանց յընթացս տարւոյն, այլ Նախագահ Ատենին պարոն Գ. Տէր Գալստան, վասն կարճատև ժամանակի բացակայ եղև վասն ճանապարհորդութեան յԵւրոպա։ Խնդիր Նորին վասն հեռանալոյ ի պաշտօնէ վասն բացակայութեան իւր չեղև ընդունելի Անդամոց Վարչութեան. ուստի չարունակեաց մնալ անդամ Ատենին. պարոն Դ. Մէլքումեան որոշեցաւ և վարեաց զպաշտօն Նախագահութեան՝ մինչ ցվերադարձ Նորին։*

*Յընթացս նոյն տարւոյ, յորժամ հարկաւոր եղևն տեղի կալան ժողովք Վարչական, ուր ամենայն խնդիրք, գործառնութիւն և թղթակցութիւնք վերաբերելի Հաստատութեանս մեր, առաջի բերեալ զկնի խորհրդակցութեան որոշումն ստացան և կատարեցան։*

*Պայման պաշտօնավարութեան ներկայեան Անդամոց Ատենին լրացեալ գոլով՝ այսօր հրաժարին նոքա ի պաշտօնէ, և խնդրեն Արգոյ Ժողովրդ ընտրել զնոր անդամս վասն երկքամեայ պաշտօնավարութեան Ատենին։*

---

## ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ

*Որպէս յայտ է Ժողովրդ և կայ արձանագրեալ ի վերջին Տեղեկագրի մեր, գրութեամբ Ատենին խնդրեցաք ի Նորին Սրբազնութենէ Տ. Սահակայ Արք-Եպիսկոպոսի յԱռաջնորդէն Պարսկ. և Հնդկաստանայ, զթեմ նախկին վիճակաւոր քահանային մեր վերամեաւ երկարաձգել։*

*Թէպէտ խնդիր մեր երկարաձգման թեմոյ նախկին վիճակաւոր քահա-*

նայի մեր չեղև ընդունելի, այլև այնպէս նորընտիր փոխանորդ նորին Սրբակրօն Տէր Անդրէաս Գ. Աբգարեան յոյժ յապաղելով ի ճանապարհին հազիւ ի մուտ տարւոյս ժամանեաց աստ, որով ժամանակ Թեմին նախկին վիճակաւորի մեր ձգեցաւ մինչ չորս և կէս ամս։ Ի վերջին տարւոջ Թեմին իւր, հաւանութեամբ Ատենին եղև և նա յայցելութիւն բոլոր ժողովրդեան մեր ի Ջաւա և ի Կղզոջ նորին, վասն մատակարարութեան եկեղեցական կարօտութեանց նոցին։ Ահա հաճելի է մեզ աստ յայտնել նախ խորին բաւարարութիւն մեր առ վեր Սրբակրօն Տէր Վարդան նախկին վիճակաւոր քահանայ մեր, վասն բարեպաշտ և կանոնաւոր պաշտօնավարութեան իւրոյ, և ապա հաւանութիւն մեր, վասն բարեշնորհ, ուղղիչ և անարատ ընթացից իւրոց ընդ արգոյ ժողովուրդս մեր Ջավայի։

## ՄԱՆՈՒԿ ՆԻ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Արդեամբ սոյն Հաստատութեան կարգեալ ուսուցիչ հայերէն լեզուի ի Բթաւիա պարոն Խ. Գ. Մարկոսեան զկնի տասնամեայ բարեջան վաստակոց և դաստուութեանց ի վերջ տարւոյն յայտնեաց Ատենին կամենալ դադարել ի պաշտօնէ ցվերջ Մարչ ամսոյ 1904 ամի։ Վարչութիւն մեր զկնի խորհրդակցութեան ընդունեաց հրաժարումն նորին, պատեհ համարեաց գրութեամբ յայտնել նմա զայն և մատուցանել նմա շնորհակալիս Ատենին և ժողովրդոց քաղաքիս վասն երկարամեայ ազգօգուտ վաստակոց և ջանից նորին։

Ատեան մեր ի ժամանակի Թղթակցեալ է վասն հոգացողութեան այլ մի պատշաճ տեղափոխի, որ ունիցի և յարմարութիւն վասն ժամասացութեան յեկեղեցւոջ մերում։ Նոյնպէս և վասն հարկաւոր դասամատենից, և յուսադիր եմք ի մօտոյ կարողանալ յայտնել ժողովրդոց մեր լի յաջողումն հոգացողութեան մեր։

Վեր արդեամբ ևս ուսանին ի Մարդասիրական Ճեմարանի ի Կալկաթա հաստատեալ Թիւ չքաւոր Ջուղայեցի մանկանց, յորոց ոմանք դեռ ի չատ ինֆանտս ընդ երկար մնալով իւրեանց անդ, արգել լեցին ընդունման այն մանկանց, որք արդէն բաւականին ուսանելով ի Կեդրոնական վարժատան ի Ջուղա, կարօտին միայն մի կամ երկու ամաց ուսման ճեմարանին վասն յարմարեցուցանելոյ զնոսա վասն պաշտօնի կամ բարձր ուսման։ Դիտողութեամբ Ատենին բարւոքել զայս և հոգալ զի այսուհետ արդիւնք վեր Հաստատութեան պիտանի լիցին վասն առաջադիմութեանց աւանել մանկանց քան մինչ ցարդ։ Եւս վասն օգնական կալոյ վեր Կեդրոնական վարժատանն ի Ջուղա առաւելուլ պիտանութիւն նպատակի իւր։ Եւս վասն արգելելոյ այսուհետ փոքրիկ երեխայից Թողուլ զծնողս և զծննդավայրս իւրեանց, Վարչութիւն մեր աւարտեալ է այսուհետ ստանալ ի Թիւս սանուց սոյն Հաստատութեան միայն այնպիսի մանկունս, որք արդէն յաջողապէս անցեալ իցեն չորրորդ դասն Կեդրոնական վարժատան Ջուղայոյ և զմնացեալսն հերքել բոլորովին։

Ջայս աւարտումն Ատենին լի բացատրութեամբ յայտնեցաք ևս Վարչութեան Մարդ. Ճեմարանի ի Կալկաթա և ուրախ եմք ստացաք պատասխանի հաւանութեան և համաձայնութեան, զոր արժանի համարեմք այսօր ընթեռնուլ առաջի ժողովոյդ։

Թողեալ զավորական զանազան տուրս վասն ուսման կարօտաւորաց, որք երեան ի հաշուի, Ատեան մեր պարտիք համարեաց օգնական կալ նորա-



կառոյց Ս. Կատարինէ Արհեստանոցին ի Նոր-Ջուղա, և ի Մնդկէ սոյն հաստատութեան քսան և հինգ Անգլ. ոսկի առաքեաց ի նպաստ նորին վասն քաջալերութեան այսպիսի ազգօգուտ հաստատութեանց և ահա Վարչութիւն մեր աստ գոհութիւն իւր յայտնէ առ ազգասէր հաստատողք նորին գլխաւորապէս առ բարեջան Գերապատիւ Բագրատ Վարդապետ Վարդազարեան, որոյ անընդհատ և արդիւնաւոր ջանք յօգուտ և յառաջադիմութիւն Ազգին լցուցանէ զսիրտ մեր բոլորիս երախտագիտութեամբ։

Կալուածք Հաստատութեանս յընթացս տարւոյն չարունակ ի վարձու մնացին, այլ ոմանք կարօտ եղեն մեծածախս նորոգութեանց, զորս խնայարար կատարելով այժմ ի բարւոք դրութեան գտանին։ Ի վերջ Դիզեմբր ամսոյ տարւոյն Տունն ի Գանգ—Սկօտ փողոցի դադարեցաւ ի վարձակալէ և հարկաւոր եղև նորոգել և ներկել զայն, այլ տխուր եմք յոյժ մինչ ցայս վայր դեռ չէ յաջողեալ մեզ կրկին ի վարձու տալ զայն։

Ի վերջոյ յայտնեմք, Թէ Տարեհաշիւ Ել-և-մտից սոյն Հաստատութեան փակեցաւ իբր Գ. 1250 լի չահիւ։

## Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ

Որպէս խոստացաք ի վերջին Տեղեկագրի մերում, ուրախ եմք յայտնել, Վարչութեան մեր յաջողեցաւ և հարկաւոր եղև տալ կատարեալ նորոգել և ներկել մեծագումար ծախիւք զհամայն շինուածս Եկեղեցւոյ։ Ջէ տարակոյս Ատենին Թէ արգոյ ժողովուրդ մեր ըստ ամենայնի բաւարար պիտի լինին ընդ այժմեան ամուր և մաքուր կայութեան նոցին, այլ հարկ է ևս յայտնել աստ Թէ հետևանք վեր անԹերի նորոգութեանց, եղև զի տարեհաշիւ Ել-և-մտից Եկեղեցւոյ իբր Գ. 810 լի վնասիւ փակեցաւ։

## ՀԱՅԿԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երկուքին անշարժ կալուածք սոյն Հաստատութեան տարւոջս դատարկեցան ի վարձակալաց, այլ առանց ընդ երկար դատարկ մնալոյ յաջողեցաւ Ատենին զկնի բարեպէս նորոգութեանց վերստին ի վարձու տալ զնոսա։

Օգնականութիւն Հաստատութեանս առ ազգային չքաւորս մեր ի Ջաւա յընթացս տարւոյս բովանդակի Գ. 1770 լի. Գ. 40 լի պակաս քան ամին անցելոյ, այլ աղագաւ փոխման վարձակալաց, և նորոգութեանց տարեհաշիւ նորին իբր Գ. 253 լի վնասիւ փակեցաւ։

## ԱԶԳ. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ ՆՈՐ—ՋՈՒՂԱՅՈՒ

Հաշիւք վեր երեքտասան Հաստատութեանց ընդ Ս. Յովհաննու եկեղեցւոյ մեր փակեալ ցվերջ 1903 ամի, ցուցանեն միասին մայրագումար Գ. 101.945. 15 լի. յորմէ Գ. 82600 լին ապահովեալ է ի 92 հատ Շէրս Ջաւա Բանքի, և Գ. 13000 յանշարժ կալուած մի. և մնացեալ Գ. 6345. 15 ի պատրաստ դրամ։

Ի սկզբան 1904 ամի Գ. 4425 լի փոխանցաւ առ Ջուղա, որոյ Գ. 3525 լի ի վեր պատրաստ դրամէ, և Գ. 900. ի մնդկէ Մ. և Ց. Ուսումնարանի ի

հաշիւ հետագայ Հաստատութեանց։

| | | |
|---|---|---|
| Կեդրոնական Երկսեռ Դպրոցաց . . . | Գ. | 818— |
| Եւս Նուէր Մ. և Ց. Ուսումնարանի . | » | 900— |
| Արկեղն Աղքատաց . . . . . | » | 1023— |
| Ամենափրկչեան Վանացն . . . . | » | 607—50 |
| » Տպարանին . . . . | » | 139—50 |
| Ս. Կատարինէ Դպրոցին . . . . | » | 279— |
| Ս. Պօղոս Դպրոցին . . . . . | » | 100— |
| Ս. Մինաս եկեղեցւոյ . . . . | » | 341— |
| Ս. Յովհաննու եկեղեցւոյ . . . . | » | 217— |
| Գումար որպէս վերն | Գ. | 4425— |

## ՋԱՎԱ ԲԱՆՔ

Զի Հաստատութիւնք մեր Ազգային թէ Ջավայի և թէ Նոր—Ջուղայի՝ մեծագումար բաժանորդ են գործողութեանց վեր դրամատանն, հարկաւոր համարեմք աստ յայտ առնել, թէ կառավարութիւն Հնդկաց Հօլանդացւոց շնորհեաց յօժարութիւն նորոգել վերստին ըստ սովորականին «օկտրուի» կոչեցեալ Արքունական արտօնութիւն իւր առ վեր դրամատունն, որ լրանայ ի 1906 տարւոջ. ահա թէ ինչ մեկի այնուհետ հետևանք սոյն դադարմանն, դժուար է այժմ գուշակել, այլ կարծեմք հաւաստակաց է թէ նպաստակ կառավարութեանն է նորոգել զայն ի ներքոյ նոր դաշանց, գլխաւորապէս վասն առաւելելոյ զօգուտս և զսամ իւր ի շահս վեր դրամատան։

---

Ահա տեղեկագիր մեր աւարտելով աստ, խնդրեմք կցորդել ընդ նմին նախ կարճառօտ համարս տարեւոր Ել-և-մտից երեքին Հաստատութեանց մեր, ապա զկշիռս Մայրահաշուոց նոցին, և Հաստատութեանց Նոր—Ջուղայի փակեալ ցվերջ 1903 ամի.

---

### Կարճառօտ Համար Ել-և-մտից Մ. և Ց. Ուսումնարանի վասն 1903 ամի,

#### ՄՈՒՏՔ

| | | |
|---|---|---|
| Վարձ չորեքին կալուածոց նորին . . . | Գ. | 7680— |
| Դիվիդէնտ 60 հատ Ջավա Բանք Շէյրաց . | » | 2790— |
| Վաշխ համարոյ . . . . . | » | 295— |
| | Գ. | 11065— |

#### ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գետնահարկ չորեքին կալուածոց . . | Գ. | 748—50 | | |
| Նորոգութեանց » . . | » | 794—80 | | |
| Ապահ. հրկիզութեան » . . | » | 286—40 | | |
| Ծախք ուսման 16 մանկանց ի Մ. Ճեմարանի ի Կալկաթա . . . | » | 3966— | | |
| Փոխադրելի | Գ. | 5795—70 | Գ. | 11065— |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Փոխադրեալ | Գ. | 5795—70 | Գ. | 11065— |
| Եւս ես ի Ջավա . . . . . | » | 1540— | | |
| Եւս ես ի Լոնդոն . . . . . | » | 480— | | |
| Նուէր կեդր. երկսեռ դպրոցաց ի Ջուղա | » | 900— | | |
| Եւս Նորականոյց Ս. Կատ. արհեստանոցին . | » | 302—50 | | |
| Եւս Փարապատանայ Որբանոցին. . . . | » | 60— | | |
| Ատենադպրութեան և համարակալութեան . . | » | 600— | | |
| Մանր ծախք և թղթադրոշմք . . . . | » | 141—30 | Գ. | 9819—50 |
| Առաւելեալ եկամուտ տարւոյն | | | Գ. | 1245—50 |

---

### Կարճառօտ համար Ել-և-մտից Ս. Յովհաննու Եկեղեցւոյ վասն 1903 ամի։

#### ՄՈՒՏՔ

| | | |
|---|---|---|
| Վարձ տանն ի դաշտի արքունի միամեա . | Գ. | 3300— |
| Դիվիդէնթ 2 հատ Ջաւա Բանք Շէյրաց . . | » | 93— |
| Վաշխ համարոյ . . . . . | » | 69—73 |
| | Գ. | 3462—73 |

#### ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գետնահարկ տան Ս. Եկեղեցւոյ . . | Գ. | 202—50 | | |
| Նորոգութեան տանն » . . | » | 339—28 | | |
| Եւս և ներկելոյ համայն շինուածոյ Եկեղեցւոյ և այլ մանր ծախք նորին . | » | 1285—97 | | |
| Ապահովութիւն հրկիզութեան . . | » | 60— | | |
| Տուրք համազգի կարօտելոց . . | » | 15— | | |
| Թոշակ քահանայի և ժամկոչի. վարձ ծառայից | » | 2370— | Գ. | 4272—75 |
| Պակասեալ եկամուտ տարւոյն | | | Գ. | 810— 2 |

---

### Կարճառօտ համար Ել-և-մտից Հայկեան Միաբանութեան վասն 1903 ամի։

#### ՄՈՒՏՔ

| | | |
|---|---|---|
| Վարձ երկոքին կալուածոց . . . | Գ. | 2255— |
| Դիվիդէնտ 1 հատ Ջավա Բանք Շէյրի . . | » | 46—50 |
| | Գ. | 2301—50 |

#### ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գետնահարկ երկոքին կալուածոց . . | Գ. | 214—50 | | |
| Նորոգութեանց » . . | » | 483—52 | | |
| Ապահովութիւն հրկիզութեան . . | » | 87—40 | | |
| Տուրք համազգի կարօտելոց Ջավու . | » | 1770— | Գ. | 2555—42 |
| Պակասեալ եկամուտ տարւոյն | | | Գ. | 253—92 |

## Հաշուեկշիռ Մայրահաշուոյ Ս. Յովհաննու

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Առ Տուն ի Կոնստանդնուպոլիս | | | Գ. | 52000 | |
| » Շինուածք Եկեղեցւոյ | | | » | 28000 | |
| » Անօթեղէնք ևս | | | » | 2000 | |
| » Կահ և կարասիք | | | » | 500 | |
| » Շէյրք Զավա Բանքի 2 հատ | | | » | 1800 | |
| » Զարտար բանք (աւանդ) | | | » | 7500 | |
| » Սանդուկն | | | » | 510 | 10 |
| | | | Գ. | 92310 | 10 |

### Հաստատութիւնք Զուղայու. Ապահովութիւնք

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Առ Մթերանոց ի Կալիբաար յանուն Ամենապ. Վնց. | Գ. | 13000 | | | |
| » Շէյրք Զավաբանքի 8 հատ » » | » | 7200 | | | |
| » Եւս ևս 22 ևս Արկեղն Աղքատաց | » | 19800 | | | |
| » Եւս ևս 11 ևս Ս. Մինաս Եկեղեց. | » | 9900 | | | |
| » Եւս ևս 1 ևս Ս. Կատարինէ Դպրց. | » | 900 | | | |
| » Եւս ևս 4 ևս Ս. Ստփաննս. Եկեղ. | » | 3600 | | | |
| » Եւս ևս 10 ևս Հասարակութ. Զուղ. | » | 9000 | | | |
| » Եւս ևս 7 ևս Կեդրոն. Դպրոցաց | » | 6300 | | | |
| » Եւս ևս 3 ևս Ամենափ. Տպարանի | » | 2700 | | | |
| » Եւս ևս 7 ևս Ս. Պօղոս Դպրոցին | » | 6200 | | | |
| » Եւս ևս 7 ևս Ս. Յովհաննու Եկեղ. | » | 6300 | | | |
| » Եւս ևս 4 ևս Ս. Գրիգոր » | » | 3600 | | | |
| » Եւս ևս 1 ևս Ս. Գէորգ » | » | 900 | | | |
| » Եւս ևս 7 ևս Հոգեոր Դպրոցին | » | 6200 | Գ. | 95600 | |
| | | | Գ. | 187910 | 10 |



## Եկեղեցւոյ վասն Դեկտեմբեր ամսոյ 1903 ամի։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ի Ստացուածք Եկեղեցւոյ | | | Գ. | 84054 | 7 |
| » Գանձանակ դրաւոր աշխատանաց | | | » | 910 | 88 |
| » Մ. և Ց. Ուսումնարան | | | » | 1000 | |
| | | | Գ. | 85964 | 95 |

### Հաստատութիւնք Զուղայու Ստացուածք

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ի Արկղն Աղքատաց | Գ. | 20823 | | | |
| » Ամենափրկիչ Ս. Վանքն | » | 20807 | 50 | | |
| » Հոգեորական Դպրոց | » | 10814 | 79 | | |
| » Ս. Մինաս Եկեղեցի | » | 10241 | | | |
| » Կեդրոնական Դպրոց | » | 7118 | | | |
| » Ս. Յովհաննու Եկեղեցի | » | 6517 | | | |
| » Ս. Պօղոս Դպրոց Սանդիբարանայ | » | 6336 | 22 | | |
| » Ս. Կատարինէ Օրիորդաց Դպրոց | » | 5679 | | | |
| » Ս. Ստեփաննոս Եկեղեցի | » | 3871 | 96 | | |
| » Ս. Գրիգոր » | » | 3724 | | | |
| » Ամենափրկչեան Տպարան | » | 2839 | 50 | | |
| » Կտակ Հանգ. Թադէոս Արք. Եպիսկոպոսի | » | 2242 | 18 | | |
| » Ս. Գէորգ Եկեղեցի | » | 931 | | Գ. 101945 | 15 |
| | | | | Գ. 187910 | 10 |

## Հաշուեկշիռ Մայրահաշւոյ Մանուկ և Յարութիւն Ուսումնարանի վասն Դեկտեմբեր ամսոյ 1903 ամի։

| | | | |
|---|---|---|---|
| Առ | Տուն ի Տանարանգ . . . . . . . | Գ. 28800 | |
| » | Մթերանոցք ի Կալի Բասր . . . . . | » 122200 | |
| » | Տուն ի Գանգ—Սկօտ . . . . . . | » 11800 | |
| » | Գրքատուն . . . . . . . . | » 400 | |
| » | Տնեղէն . . . . . . . . | » 410 | 10 |
| » | Շէյրք Զավա Բանքի 60 հատ . . . . | » 53141 | 32 |
| » | Ս. Յովհաննու Եկեղեցին . . . . . | » 1000 | |
| » | Զարտրտ Բանք (աւանդ) . . . . . | » 11000 | |
| » | Սանդուղն . . . . . . . . | » 978 | 2 |
| | | Գ. 229729 | 44 |

| | | |
|---|---|---|
| Ի Ստացուածք . . . . . . . . | Գ. 229729 | 44 |
| | Գ. 229729 | 44 |

## Հաշուեկշիռ մայրահաշւոյ Հայկեան Միաբանութեան վասն Դեկտեմբեր ամսոյ 1903 ամի։

| | | | |
|---|---|---|---|
| Առ | Մթերանոց ի Կալի Բասր . . . . . | Գ. 24500 | |
| » | Տուն ի քրօն Սիրի . . . . . | » 15000 | |
| » | Շէյր Զավա Բանքի 1 հատ . . . . . | » 868 | 31 |
| » | Սանդուղն . . . . . . . . | » 491 | 55 |
| » | Տնեղէն . . . . . . . . | » 50 | |
| | | Գ. 40909 | 86 |

| | | |
|---|---|---|
| Ի Ստացուածք . . . . . . . . | Գ. 40909 | 86 |
| | Գ. 40909 | 86 |

Գ. Տէր Գալստանեան

Ս. Ա. Ստեփաննոսեան

Գ. Մելքումեան

Մ. Զօրաբ

Նախագահ

Գանձապետ

} Խորհրդատուք

Բրաւիա 8 Մէյ 1904.

Գ. Մ. Յովհաննէս

Ատենադպիր կառ.

## ՀԱՆՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԳԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՄԻԵՐՈՐԴ

Ըստ յայտարարութեան շրջաբերականի Վարչութեան Ատենին Ցանձանձանաց ժողովրդեան հայոց ի Ջաւա, թուագրեալ յ'8 Ապրիլ, և հրատարակութեան «ի Ջավա Կոռանտ» Լրաթղթի Տէրութեան, թուեալ 31 Մարտ անցելոյ, գումարեցաւ Տարեւոր հանրական ժողով մերազանց յ'8 Մէյ ամսոյ 1904 ամի, յաւուր կիւրակէի ի 10 ժամուն առաւօտեան ի սրահի ժամատան մեր, ուր ներկայ էին սրբակրօն Տէր Անդրէաս Գ. Արգարեան, վիճակաւոր քահանայ մեր, պարոնայք Գ. Տէր Գալստան, Դ. Մէլքում, Ս. Ա. Ստեփաննոս, Մանուկ Զօրաբ. Գ. Մ. Յովհաննէս, Մ. Յ. Զօրաբ, Բարսեղ Տէր Մինաս, Յովհ. Ն. Տէր Գալստան, Խ. Գ. Մարկոս, Աւետ Մարտին, Յ. Կ. Սարգիս և Հ. Դ. Անտոն։

Նախագահ Ատենին պարոն Գ. Տէր Գալստան կալաւ զաթոռ ժողովոյն։

Ընթերցաւ թուղթ մի ստացեալ ի հասարակութենէ Սուրբայոյ թուեալ 6 Ապրիլ անցելոյ, յորում մերազնայք տեղւոյն կարգեն երեսփոխանս իւրեանց աստ վասն տալոյ զքուէս ի ժողովի, այլ զի ի վեր թղթոյ ստորագրութիւնք երեւեցան, որոց իսկութիւն երկբայելի եղև, առաջարկութեամբ պարոն Ս. Ա. Ստեփաննոսի և ընդհանուր հաւանութեամբ ժողովոյն աւարտեցաւ չընդունել զվեր թուղթն իբրև կանոնաւոր և յայտնել նոցա գրութեամբ զայսմանէ։

Ի Սմարանգայ հասարակութենէ տխուր եմք չստացաք պատասխանի թղթոյ մեր թուեալ 25 Մարտ անցելոյ։

Ընթերցաւ թուղթ մի երկայն ի բնակչաց Բալի, Լոմբոկ, և Սելէբիս կղզւոջ, որոյ նիւթաւոր խնդիր էր այս։

«Այնպէս վերջաւորել զի համայն հայ Լուսաւորչականք ի բոլոր Հոլանդա—Հնդիկս, լիցին հաւասար անդամք թեմին Բթաւիոյ, նման այժմեան Ջաւաբնակ հայոցդ»։

Առաջարկութեամբ պարոն Գ. Մ. Յովհաննիսի, և ընդունելութեամբ համայն ժողովի, աւարտեցաւ, ի պատասխանի վեր գրութեան և առաջարկութեան, յայտնել նոցա նախ թէ չեն նոքա «Անձինք լքեալք որոց ոչ գոյ եկեղեցի և ոչ հովիւ հոգեւոր». զի ամենայն հայ բնակիչ Լուսաւորչական ի համայն Հոլանդա—Հնդիկս, արդէն կատարեալ անդամ է թեմին Բթաւիոյ, և յոր-



ժամ լիցի փափագ այսպիսի ի հեռու բնակողաց անդամոց թեմին, պատրաստ եմք մեք միշտ առաքել զվիճակաւորն թեմին յայցելութիւն իւրեանց։

Պարոն Ատենադպիր կառավարիչն ընթերցաւ զտարեւոր Տեղեկագիր Ատենին վասն 1903 ամի որ և կալաւ լի հաւանութիւն ժողովոյն։

Առաջարկեցաւ ի սրբակրօն Տէր Անդրէաս քահանայէն, և ընդունելի եղև ժողովոյն, ի Մնգկէ Մ. և Յ. Ուսումնարանէն տասն Անգլ. ոսկի առաքել ի նպաստ և ի քաջալերութիւն նորահաստատ «Նոր Ջուղայի Լրաբեր» ամսաթերթի և Ամենափրկչեան տպարանի։

Առաջարկեցաւ ի պարոն Ս. Ա. Ստեփաննոսէ և երկրորդեցաւ ի պարոն Գ. Տէր Գալստանէ և ընդունելի եղև ժողովոյն, ուղղել թուղթ մի առ Նորին Վեհափառ Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն հայոց յԷջմիածին, և զուշադրութիւն Նորին Վեհափառութեան հրաւիրել առ 27 երորդ պայման Սահմանադրութեան և կարգադրութեան ժողովրդեան Հայոց ի Ջավա և խնդրել զխորհուրդ Նորին, թէ արդեաք անփոփոխ պահել զպայման, թէ ի պատճառս անկանոն ընթացից Կառավարութեան Ռուսաց, որ գրաւէ բռնութեամբ զբստացուածս Ազգին, փոխադրել զայն յօգուտ Նոր Ջուղայի կամ այլ ուրեք։

Առաջարկեցաւ յԱտենէն և կալաւ հաւանութիւն համայն ժողովոյ, ի պատճառս արտաքոյ կարգի պակասելոյ գնոց անչարժ ստացուածոց երեքին Հաստատութեանց, ի նորոյ գնահատել զնոսա որպէս ի ստորև։

## Մ. ԵՒ Յ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Երկոքին մթերանոցք նորին ի Կալի Բսար, որոց գինք ի հաշուեմատեան այժմ են Գ. 122200, պակասեցուցանել մինչ Գ. 45000,

Տունն ի Տանարանգ, որոյ գին ի հաշուեմատեան այժմ է Գ. 28800, պակասեցուցանել մինչ Գ. 24000,

Տունն ի Գանգ Սկօտ, որոյ գին ի հաշուեմատեան այժմ է Գ. 11800, առաւելուլ մինչ Գ, 12000.

## ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ

Տունն ի դաշտին սրբունի, որոյ գին ի հաշուեմատեան այժմ է Գ. 52000, պակասեցուցանել մինչ Գ. 40000։

## ՀԱՑԿԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մթերանոց մի ի Կալի Բսար գնահատեալ ի հաշուեմատեան Գ. 24500 պակասեցուցանել մինչ Գ. 7000, որով գինք Կալուածոց և գումար ստացուածոց վեր երեքին Հաստատութեանց միասին Գ. 111300 լի պակասեցեն ի հաշուեմատեանս և մօտ լիցին այժմեան իսկ իրական գնոց և արժէից, և համեմատ եկամտից նոցին։

Առաջարկութեամբ պարոն Յովհ. Ն. Տէր Գալստանի որում երկրորդեաց պարոն Խ. Գ. Մարկոսեան և հաւանելի եղև բոլոր ժողովոյն հին անդամք Ատենին կրկին ընտրեցան վասն երեքամեայ պաշտօնավարութեան։

Շնորհակալութիւն ժողովոյն մատուցաւ յարգոյ Նախագահին և միւս անդամոց Ատենին վասն բարեջան վաստակոց և խնամատարութեան Հաստատութեանց Ազգին և փակեցաւ ժողովն։

Նախագահ՝ Գ. Տէր Գալստանեան

Հ.Ս.Խ.Հ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясники на
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013

«Ազգային գրադարան»
172838
NL0051068